Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ «Վանաձորի Հ. Թումանյանի անվան թիվ 3 հիմնական դպրոց» ՊՈԱԿ

Թեմա՝ Դասի պլանավորում: Պլանավորման արդյունավետ եղանակների կարևորությունը

Վերապատրաստող, մենթոր՝ Սյուզաննա Ափինյան

Ուսուցիչ՝ Անի Աշուղյան

Վանաձոր 2023

Բովանդակություն

Ներածություն։

Հետազոտության նպատակը, խնդիրները։ Թեմայի արդիականությունը 3

Գլուխ 1։ Դասի պլանավորում 6

Գլուխ 2։ Պլանավորման արդյունավետ եղանակների կարևորությունը 9

Եզրակացություն 18

Օգտագործված գրականության ցանկ 19

Ներածություն: Հետազոտության նպատակը, խնդիրները: Թեմայի արդիականությունը

Ի՞նչ ենք հասկանում «դասի պլանավորում» ասելով, ի՞նչ նպատակ է հետապնդում հետազոտությունը:

Աշխատանքի **նպատակն** է՝ ներկայացնել, թե ինչ ենք հասկանում «դասի պլանավորում» ասելով, ինչու է անհրաժեշտ պլանավորել դասը:

Հետազոտության **խնդիրներն** են՝

- ուսումնասիրել, բացահայտել դասի պլանավորման արդյունավետ եղանակներ, որոնք խթան կհանդիսանան ուսուցման արդյունավետության բարձրացման համար,
- արդեն պլանավորած և իրականացրած դասին ինքնանդրադարձ կատարելով՝ վեր հանել առաջացած խնդիրները, դրանց լուծմանը միտված քայլեր ձեռնարկել:

Ուսուցումը տարբեր գործունեությունների ամբողջություն է, որի ընթացքում յուրաքանչյուր սովորող ձեռք է բերում գիտելիքներ, կարողություններ և հմտություններ: Ուսուցման գործընթացի արդյունավետ կազմակերպումը միտված է կրթության որակը բարձրացնելուն, տարբեր մեթոդների և հնարների կիրառման շնորհիվ ուսուցման մատչելիությունն ապահովելուն, ինքնարտահայտման համար հարմարավետ պայմաններ ստեղծելուն:

Աշխատանքում կներկայացվեն դասի պլանավորման արդյունավետ եղանակներ, որոնց միջոցով կբարձրացվի ուսուցման և ուսումնառության որակը:

Ուսուցման արդյունավետության համար ուսուցիչը պիտի կիրառի մեթոդական այնպիսի հնարներ, որոնք սովորողների մոտ կառաջացնեն հետաքրքրություն առարկայի նկատմամբ: Արդյունավետ դասավանդման համար նորօրյա դպրոցի ուսուցչին անհրաժեշտ է ոչ միայն առարկայի խոր և բազմակողմանի իմացություն, այլև դրա կենսագործմանն ուղղված եղանակների, ձևերի ու միջոցների նպատակահարմար ընտրություն կատարելու կարողություն և հմտություն:

Թեմայի ուսումնասիրությունն **արդիական** է, քանի որ կրթության ոլորտը փոխվում է արագ տեմպերով, և ուսուցիչը պետք է մշակի ավելի ժամանակակից ռազմավարություններ՝ իր աշխատանքը ՀՊՉ պահանջներին հարմարեցնելու և որակյալ կրթություն իրականացնելու նպատակով:

Ինչպես նշվեց, դասի արդյունավետության հետ կապված մտահղացումների իրագործման պայման է դասի ամենօրյա պլանավորումը, որի բաղադրիչներն են՝ դասի թեման, նպատակները (կրթական, զարգացնող, դաստիարակչական), տեսակը (նոր նյութի յուրացման, ամրապնդման, գիտելիքների, կարողությունների, հմտությունների ստուգման, յուրացված նյութի համակարգման և ընդհանրացման), հիմնական փուլերին հատկացվող ժամանակի բաշխումը, հենքային հասկացությունների ձևավորման փուլերը, դասավանդման մեթոդները՝ բանավոր (անհատական, համընդհանուր) կամ գրավոր (ինքնուրույն, ստուգողական աշխատանք, թելադրություն) հարցում, դասախոսություն, բացատրություն, խնդրահարույց բացատրություն, զրույց, ինքնուրույն աշխատանք, վարժություն, դերային խաղ, վարժությունների և խնդիրների լուծում սովորական կամ խաղային ձևով, աղյուսակների հետ աշխատանք, դասագրքի տեքստի շուրջ աշխատանք, նկարագրությունների կազմում և այլն:

Դասի պլանը կազմելիս անհրաժեշտ է հաշվի առնել, որ առանձին դասերի պլանավորված խնդիրները պետք է հանդիսանան ամբողջ ուսումնասիրվող նյութի ընդհանուր խնդրի բաղկացուցիչ մասը: Դասի ընթացքում բացահայտված գիտելիքների բաղադրիչները պետք է ապահովեն այս կամ այն ամբողջական խնդրի լուծման որոշակի մասը: Առանձին դասերի կոնկրետ խնդիրները պետք է դիտարկվեն մյուսների հետ փոխկապակցված:

Դասի պլանն անհրաժեշտ է կազմել այնպես, որ ուսուցման պլանավորվող արդյունքներն ազդեցություն ունենան ուսուցման որակի բարձրացման վրա և առավել արդյունավետ իրացնեն ուսումնական ծրագրի հնարավորությունները: Դրա համար դասի պլանավորվող արդյունքները պետք է բավարարեն հետևյալ պահանջները՝ լինեն հստակ, իրական , այսինքն՝աշակերտը պետք է հասկանա, թե ինչ են իրենից ուզում և ինչպես այն իրականացնել:

Այսպիսով, եզրակացնում ենք, որ արդյունավետ ուսուցման իրագործման համար անհրաժեշտ է ճիշտ պլանավորել դասը: Կարելի է կիրառել դասի հետևյալ կառուցվածքային միավորները՝ դասի սկզբի կազմակերպում, գիտելիքների, կարողությունների և հմտությունների բացահայտում, աշխատանք ուսումնասիրվող նյութի հետ, ծանոթացում նոր նյութին, գիտելիքների պլանավորված մակարդակի ապահովում, գիտելիքների համակարգում և ընդհանրացում, տնային աշխատանքի կազմակերպում:

Գլուխ 1: Դասի պլանավորում

Ուսուցչի մասնագիտական որակներից է կախված դասի ճիշտ պլանավորումը, որը դասի արդյունավետության բարձրացման կարևոր գործոնն է:

Դասի ճիշտ պլանավորման համար անհրաժեշտ է դասի խնդիրների և նպատակների հստակ գիտակցում: Այն ենթադրում է պատասխանել հետևյալ հարցերին՝

ա/ ի՞նչ սովորեցնել,

բ/ ինչո՞ւ սովորեցնել,

գ/ ինչպե՞ս սովորեցնել:

Ուսուցիչը դասը պետք է պլանավորի այնպես, որպեսզի օգնի աշակերտին՝ ինքնուրույն գիտելիքներ ձեռք բերել:

Ուսուցման ընթացքում գլխավոր ծանրաբեռնվածությունը պետք է ընկնի ոչ թե

աշակերտի հիշողության, այլ մտածողության վրա: Ուսուցումը պետք է լինի ոչ թե վերարտադրողական, այլ ստեղծագործական գործունեություն:

Դասի պլանը կազմելիս անհրաժեշտ է հաշվի առնել, որ մտավոր գործունեության ակտիվությունը նյութի հետ ծանոթացմանը համընթաց ավելանում է, եթե միաժամանակ աշակերտները կատարում են տվյալ նյութի յուրացմանն օժանդակող առաջադրանքներ, և պահպանվում են հետևյալ պայմանները՝
1) առաջադրված խնդիրը աշակերտներին մղում է որոշակի մտավոր հնարքի կիրառման,
2) աշակերտներն ունեն տվյալ առաջադրանքը կատարելու համար անհրաժեշտ գիտելիքներ և տվյալ հնարքի կիրառման հմտություններ,
3) տվյալ հնարքը համապատասխանում է նյութի բովանդակությանը:

Դասի հաջող սկիզբը շատ կարևոր է: Եթե ուսուցչին հաջողվի դասի առաջին րոպեներին գրավել աշակերտների ուշադրությունը, ապա դա էապես կնպաստի

դասի արդյունավետ ընթացքին: Մինչև դասը ուսուցիչը պետք է փորձի պատասխանել իր դասի նպատակի, խնդիրների, վերջնարդյունքների, ձևավորվող կարողունակությունների, նախադրյալների, գնահատման և ժամաքանակի մասին մի շարք հարցերի:

Ուսուցիչն ընտրում է դասի նյութը, հստակեցնում իր մոտեցումները, գնահատում նյութի կարևորությունը, պարզում նպատակները, թե դրանք ինչպես կարող են նպաստել մտածողության ու ակտիվ ուսումնառության զարգացմանը: Ուսուցիչը պետք է իմանա, թե դասի ժամանակ ուսումնառության որ հմտություններն է խթանելու, և մտածողության զարգացման ինչպիսի հնարավորություններ է ընձեռում տվյալ դասը:

Դասն ուսումնական պրոցեսի մի մաս է, որը կարող է կազմակերպվել դասարանում, թանգարանում, այգում և այլուր, որտեղ 45 րոպեի ընթացքում ուսումնասիրվում է ինչ-որ թեմա, իրականացվում է ուսումնական ծրագրի կրկնություն, կատարվում է գրավոր աշխատանք, ներկայացվում է յուրացվածը և այլն:

Դասը պլանավորելիս ուսուցիչը պետք է պատասխանի 4 հարցի՝

-Ի՞նչ պետք է անի ուսուցիչը դասին նախապատրաստվելիս կամ ընթացքում:

-Ի՞նչ պետք է անեն ուսուցիչն ու աշակերտները միասին:

-Ի՞նչ պետք է անեն աշակերտներն իրար հետ:

-Ի՞նչ պետք է անի յուրաքանչյուր աշակերտ ինքնուրույն:

Դասի պլանավորումն ունի պարտադիր բաղադրիչներ.

1. ուսուցիչը սահմանում է իր տեսլականը,

2. առաջադրում է այն քայլերը, որոնք պիտի կատարեն ուսուցիչն ու աշակերտները,

3. սահմանում է այն արդյունքը,որին պիտի հասնեն աշակերտները դասի վերջում:

Ուսուցման նպատակը կարող է լինել ընդհանրական, այսինքն՝ թե տվյալ դասի ընթացքում ինչին է ձգտում հասնել ուսուցիչը սովորողի հետ համատեղ գործունեության արդյունքում: Ուսուցչի նպատակը կարող է լինել ինչ-որ բանի մասին գաղափար տալը, ինչ-որ բան ձևավորելը կամ զարգացնելը:

Ուսուցման խնդիրներն այն են, թե ուսուցիչն ինչ է նախատեսում ուսուցանել կամ լուսաբանել դասի ընթացքում: Դրանք պետք է բխեն նպատակից, պիտի ծառայեն վերջնարդյունքների ձևավորմանը, հասկանալի լինեն և հետաքրքրեն սովորողներին:

Ուսումնառության նպատակները, խնդիրները և ուսումնառության վերջնարդյունքները հաճախ օգտագործվում են որպես հոմանիշներ: Այս բոլորը կապված են դասավանդման և ուսումնառության հետ: Սակայն ուսումնառության վերջնարդյունքների, նպատակների և խնդիրների միջև եղած տարբերությունն այն է, թե ով է իրականացնում գործողությունները:

Ուսումնառության նպատակները և խնդիրները նկարագրում են, թե ինչ է մտադիր անել ուսուցիչը կամ դպրոցը, մինչդեռ **ուսումնառության վերջնարդյունքը** պիտի լինի չափելի և հասանելի, և որին սովորողը կարող է հասնել դասի / ուսումնական նախագծի/ արդյունքում:

Գլուխ 2: Պլանավորման արդյունավետ եղանակների կարևորությունը

Դասի սկիզբն ապահովող լավագույն մեթոդներից մեկը մտագրոհն է: Մտագրոհի միջոցով ուսուցիչը հավաքում է մտքեր տվյալ թեմայի վերաբերյալ: Մտագրոհի ժամանակ կարևոր է մտքերի քանակը: Կարևոր է նաև, որ աշակերտները առանց երկար մտածելու պատասխանեն ուսուցչի հարցին, որպեսզի ուսուցչի համար պարզ դառնան նաև այն սխալ պատկերացումները, որոնք թեմայի վերաբերյալ ունեն աշակերտները:

Նոր նյութի բացատրության ժամանակ պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ աշակերտը միանգամից չի կարող շատ բան սովորել: Հետևաբար՝ նոր նյութը բացատրելիս ուսուցիչը պետք է ուշադիր լինի, որպեսզի չգերազանցի այդ ծավալը: Ծավալը գերազանցելու դեպքում աշակերտի աշխատանքային հիշողությունը չի կարողանա ընկալել նոր նյութը: Այդ առումով նոր նյութ բացատրելիս շատ կարևոր է այն փոքր կտորներով բացատրելը: Նոր նյութը բացատրելիս կարևոր է օգտագործել գծապատկերներ:

Բոլոր դասերի թեմաները չէ, որ կարող են լայն հնարավորություններ ընձեռել, ուստի ուսուցիչը, նախօրոք ծանոթանալով դասի նյութին, անհրաժեշտության դեպքում այն կարող է լրացնել որևէ հողվածով կամ բանավոր տրված տեղեկատվությամբ, որևէ գեղանկարով կամ լուսանկարով: Ուսուցիչն ընտրում է դասի նյութը, հստակեցնում իր մոտեցումները, գնահատում նյութի կարևորությունը, պարզում խնդիրներն ու խորհում նպատակները: Դասը կարող է արժեքավոր լինել նաև նրանով, որ սովորեցնում է սովորել և մտածել: Ուստի դասի պլանավորման մասին մտածելուն զուգահեռ ուսուցիչը պետք է ինքն իրեն հարց տա, թե դասի ժամանակ որ հմտություններն է խթանելու, և թե մտածողության զարգացման ինչպիսի հնարավորություններ է ընձեռում տվյալ դասը:

Դասի պլանավորման հիմքում դրվում է ուսուցման և դասի կառուցման եռաստիճան մոդելը՝ խթանում, իմաստի ընկալում, կշռադատում: Խթանման փուլի գլխավոր նպատակն է՝ օգնել աշակերտներին ի մի բերել դասանյութի վերաբերյալ իրենց նախնական գիտելիքները, շարժել նրանց հետաքրքրությունը և նորը

սովորելու դրդապատճառներ ստեղծել: Խթանման փուլի հիմնական նպատակներից են՝ նոր նյութի վերաբերյալ բացահայտել սովորողների գիտելիքները, քննարկվելիք նյութի մեջ ներգրավելով՝ ակտիվացնել աշակերտներին, աշակերտների մոտ ձևավորել գիտելիքներ և հմտություններ ձեռք բերելու ձգտում: Մեթոդներ, որոնք հարմար են կիրառելու դասի խթանման փուլում՝ մտագրոհ, խմբավորում, պրիզմա, մտածիր-զույգ կազմիր-քննարկիր, ձնագնդի, հինգ րոպեանոց ազատ շարադրանք: Որպեսզի աշակերտներն ունենան մնայուն գիտելիքներ, պետք է ուսուցանվող նյութը կրկնելու, ամրապնդելու, կիրառելու, կապակցելու հնարավորություններ ընձեռվեն: Այլ կերպ ասած՝ պետք է կարևորել ոչ միայն ուսումնական ծրագրի ընդգրկվածությունը, այլև խորությունը[1]: Հարց ու պատասխանը, նյութը վերհիշելը, վարժանքները, ուսուցչի բացատրական խոսքը կարևոր են ու անհրաժեշտ ուսուցման համար: Պլանավորմանն աջակցող մի շարք գործիքներ կան: Օրինակ՝ ուսումնառության դիտարկված արդյունքների կառուցվածքը, երբ ուսուցիչը ցանկանում է ուսուցումը կառուցել փոքր գաղափարից ավելի ընդհանուրը տանելու մոտեցմամբ: Ուսուցման գործընթացում կարևոր է ոչ միայն գիտելիքը, այլև՝ ըմբռնումը, կիրառումը, վերլուծությունը, համադրումը և արժևորումը: Սովորելու գործընթացը փուլային է: Ուսուցումը տեղի է ունենում աստիճանական ձևով: Իմաստի ընկալման փուլում աշակերտները տեքստի, ուսուցչի հաղորդման կամ ուսումնական որևէ այլ միջոցով ծանոթանում են նոր նյութին, այդ ընթացքում նրանցից ակնկալվում է, որ կարողանան նոր տեղեկությունները, գաղափարները կամ բովանդակությունը ներհյուսել իրենց սեփական՝ արդեն գոյություն ունեցող պատկերացումների մեջ:

Իմաստի ընկալման փուլի նպատակներն են՝ սովորողների մոտ հետաքրքրության աճի պահպանումը, տեղեկատվության ընկալման ինքնավերահսկման ապահովումը, նոր և հին տեղեկատվության շաղկապումը և իմացության նոր կառույցի ստեղծումը: Մեթոդներ, որոնք հարմար են կիրառելու դասի իմաստի ընկալման փուլում՝ T-աձև

1.Տես՝ Ս.Խաչատրյան, Կամուրջներ՝ պատերի փոխարեն, Անտարես, Երևան, 2014,էջ 12:

աղյուսակ, Գաղափարների քարտեզ, Վենի դիագրամ, Փոխգործուն նշանների համակարգ, Խորանարդում, Խճանկար, Երեք բանալի և մեկ կողպեք, Շրջագայություն պատկերասրահում:

Կշռադատման փուլի նպատակներն են՝ սովորողը նոր ստացած տեղեկատվությունը կարողանա արտահայտել իր բառերով և ձևակերպումներով, նոր գիտելիքների միաձուլում ունեցածին և դրանց աստիճանական ինտեգրացում:

Մեթոդներ, որոնք հարմար են կիրառելու կշռադատման փուլում՝ քառաբաժան,խորանարդում:

Ներկայացնեմ տարրական դասարանում / 1-ին դասարանում/ իրականացված դասի պլանավորման օրինակ:

Թեմա՝ «Հ» հնչյուն-տառի ուսուցում /ամրապնդում/

Նպատակները՝

- զարգացնել լսելու և խոսելու կարողությունները,
- հարստացնել բառապաշարը,
- զարգացնել հնչյունային լսողությունը, կարդալու և գրելու կարողությունները:

Վերջնարդյունքները՝

- լսի խոսողին, համապատասխան արձագանք տա,
- արտահայտի մտքերը հասկանալի՝ պահպանելով ուղղախոսական պարզ կանոնները,
- արտասանության միջոցով տարբերակի ձայնավոր և բաղաձայն հնչյունները:

Ուսումնական նյութեր՝

Հայաստանի տեսարժան վայրերը պատկերող նկարներ, նետ ու աղեղ:

Մեթոդներ՝

դերային խաղ, քառաբաժան /տեսա, լսեցի, զգացի, հասկացա/:

Դասի սկիզբ՝

Խթանում: Հայաստանի խորհրդանիշները՝ դրոշ, օրհներգ, զինանշան /հզոր արքա առյուծը, թռչուն՝ արծիվը՝ ձեռքին վահան: Կենտրոնում Մասիս սարն է և Նոյան տապանը: Վահանի կենտրոնում 4 հնագույն թագավորությունների զինանշաններն են՝ Արտաշեյաններ, Արշակունիներ, Բագրատունիներ և Ռուբինյաններ..

Պատմում են զինանշանը կազմող բաղադրիչների մասին՝ նշելով յուրաքանչյուրի խորհուրդը, օր.՝ հասկ՝ աշխատասիրություն:

Յուրաքանչյուր ազգ հզոր ու կանգուն է իր գրերով: Մենք էլ կանգուն ենք մեսրոպյան 39 զինվորներով: Ո՞րն է մեր լեզուն/ հայերենը/:

Հացի մասին են պատմում. հացը սուրբ է: Հայերը հյուրասեր են և իրենց հյուրերին միշտ դիմավորել են աղ ու հացով:

Հացի տեսակներն են նշում՝ մատնաքաշ, բոքոն, պուրի, լավաշ /որ չի թարգմանվում ոչ մի լեզվով, չի հնանում/:

Մի փոքրիկ պատմություն, թե ինչու է գայլն այդպես էլ սոված մնում:

Մարդը և գայլը հանդիպում են : Գայլը սոված է լինում,մարդը մի կտոր հաց է տալիս, գայլն ուտում է, կշտանում և շատ է հավանում հացը: Խնդրում է ասել, թե ինչպես է այն պատրաստել:

Պետք է վարել հողը, ցանել ցորենը, սպասել՝ մինչև աճի, արտը հնձել, ցորենը տանել ալրաղաց, աղալ, ալյուրով խմոր անել, թխել, նոր ուտել:

Գայլն ասում է՝ շատ համեղ էր, բայց այդ աշխատանքն իր համար չէ: Այդ պատճառով էլ մինչ այսօր գայլը սոված թափառում է:

Նախորդ նյութի ընթերցում, բովանդակության քննարկում:

Իմաստի ընկալում:

Նոր նյութի բացատրություն՝

Թվարկում են «հ»-ով սկսվող բառեր:

Ուսուցիչը կարդում է մի փոքրիկ պատմություն Հայաստանի մասին։ Նախ հարցնում է, թե որտեղից են սերել, ում հետնորդներն են։

Մենք Հայկի ժառանգներն ենք։ Հայկը Թորգոմ նահապետի որդին է։ Նա մեր նախապապն է՝ քաջ, ուժեղ, կորովի մի նետաձիգ, ով իր երեքթևյան նետով խոցում է Բելին, որ ուզում էր իշխել և իրեն ենթարկել հայ ժողովրդին։ Հայկն ըմբոստանում է, վերցնում իր ժառանգներին /ուստրերին ու դուստրերին/, գնում և բնակություն է հաստատում Արարատ սարի լանջին։ Բելն այդ ամենը տեսնելով՝ զորք է հավաքում և գալիս կռվելու։ Հայկն իր նետով խոցում է Բելին, զորքը փախչում է, և նրա ընկած վայրը կոչվում է Հայք՝ Հայաստան։

Ուսուցիչը բացատրում է նորածանոթ բառերը.

նահապետ-տոհմի, ցեղի նախահայրը

ապուպապ- պապի պապը

հավետ-միշտ, հավիտյան

լայնալիճ-լայն բացվածք ունեցող, աղեղնափայտի և լարի միջև եղած տարածությունը կոչվում է լիճք, նետի ու աղեղի պատյանը կոչվում է կապարճ, աղեղնարան, որքան լայնալիճ է,այնքան հեռանետ է։

<u>Կշռադատում։</u>

Դասին անդրադարձ։

Մի օր Հայկը տեսնում է, որ հայրը տխուր նստած է, հարցնում է, թե ինչ է պատահել։ Նա ասում է, որ Հայկի թոռները ծնվելու են, ինքն էլ մահանա, ինչպես են ասելու, թե ում թոռներն են։ Հայկն ասում է, որ հայրը նայի հայելու մեջ և կտեսնի իր իսկական պատկերը։ Այդպես էլ մեր թոռներն իրենց կտեսնեն հայելու մեջ և իրենց մեջ կտեսնեն մեզ։ Անցել են տարիներ, ծնվել է փեքրիկ Հայկը և հայելին ձեռքին վազում է տան մեջ և գոռում.

-Ես Հայկն եմ,ես Հայկ Նահապետն եմ։

Գնահատվում են ձևավորող գնահատմամբ։

Գնահատումը կարելի է իրականացնել տարբեր փուլերում՝ տարբեր մեթոդներ կիրառելով։

Ներկայացնենք «Խմբավորում» մեթոդը։ Աշակերտները հնարավորություն են ունենում տեղեկանալ իրենց ունեցած գիտելիքների և դրանց միջև գոյություն ունեցող կապերի մասին։ Նախ անհրաժեշտ է նկարագրել քայլերը՝

- գրել թեմայի հետ առնչվող որևէ առանցքային բառ գրատախտակի կամ թղթի կենտրոնում,
- մտագրոհի միջոցով գրառել այդ բառին առնչվող բառերն ու արտահայտությունները,
- գաղափարների գրառելը ավարտելուց հետո գծիկներով միացնել այն բառերը, որոնք իրար հետ առնչվում են,
- հնարավորին չափ շատ մտքեր գրել՝ մինչ դրանք կամ տրված ժամանակը կսպառվի։

Ուսուցիչը ներկայացնում է թեմային առնչվող փաստեր ու հասկացություններ և դրանց նկատմամբ շարժում աշակերտների հետաքրքրությունը։ Օրինակ՝ մինչև «Ֆ» հնչյուն-տառն անցնելը ռաուցիչը կարող է հարցնել, թե ինչ բառեր գիտեն այդ տառով։ Կարող է ընտրել մի քանի բառեր տեքստից, որոնք կարող են դժվար լինել աշակերտների համար։

Ժամանակակից դպրոցներում մեծ տարածում ունի խմբային աշխատանքը։ Բայց խմբային աշխատանքի խոցելի կողմերից մեկն այն է, որ առանձին աշակերտներ «թաքնվում» են խմբի հետևում։ Նման իրավիճակում ուսուցիչները կարող են կիրառել «ես-դու-մենք» հնարը։ Յուրաքանչյուր աշակերտի կարելի է առաջարկել խմբային աշխատանքի վերջում ներկայացնել սեփական ներդրումը խմբի աշխատանքում, խմբի մյուս անդամների ներդրումը և ընդհանուր խմբի աշխատանքի որակը։

Աշակերտների բանավոր և գրավոր խոսք կառուցելու կարողությունների ձևավորման և զարգացման, ստացած գիտելիքները ստուգելու և գնահատելու նպատակով օգտագործվում են գրավոր աշխատանքի չորս հիմնական տեսակներն իրենց տարատեսակներով, որոնք են՝ արտագրություն՝ ընդօրինակման և ստեղծագործական,

թելադրություն՝ սովորական(հնչյունային, նախազգուշական և համր կամ ինքնաթելադրություն) և ստեղծագործական(ընտրովի, ազատ, հորինողական և առարկայական), փոխադրություն՝ բնագրին հարազատ կամ մանրամասն, համառոտ, ընտրովի, ստեղծագործական և շարադրություն՝վերարտադրողական, ինքնուրույն կամ ստեղծագործական, գործնական[2]:

Դասի պլանավորումն անհրաժեշտ է և կարևոր հստակ նպատակներ սահմանելու և դրանց հասնելու, նոր մեթոդների կիրառման և արդյունավետ ուսուցում իրականացնելու համար:

Աշակերտների մտավոր գործունեությունը կարելի է ակտիվացնել նաև դիդակտիկ կանոնի կիրառման շնորհիվ, համաձայն որի ուսուցիչն սկզբից ձևակերպում է հստակ առաջադրանք, որն աշակերտները պետք է կատարեն նյութի ուսումնասիրման ընթացքում, լսեն ուսուցչի կամ հարցման համար գրատախտակի մոտ կանչված աշակերտին: Դասի համար առաջադրանք ընտրելիս կարևոր է հաշվի առնել, որ բոլոր աշակերտները պետք է կարողանան դրանք կատարել, այլապես աշակերտները կկորցնեն ինքնավստահությունը և կնվազի ուշադրությունը: Բոլոր աշակերտները պետք է առաջադրանքի կատարման համար ահրաժեշտ գիտելիքներ, կարողություններ և հմտություններ ունենան:

Վերը նշվածները պետք է իրենց անդրադարձն ունենան դասի պլանավորման վրա: Դասի պլան կազմելիս խորհուրդ է տրվում առանձնացնել 3 կետեր՝

1/ դասի կառուցվածքային տարրերը,

2/ ուսուցչի գործունեությունը,

3/ աշակերտի գործունեությունը:

Յուրաքանչյուր դասի պլանը պետք է հանգամանորեն մշակել,կցել այդ պլանին համապատասխան դիդակտիկ նյութ, սահմանել առաջադրանքների չափանիշները: Անհրաժեշտ է նշել ուսուցման ձևը և մեթոդները, ուսումնական գործընթացի կազմակերպման ձևերը, ստուգման ձևերը և միջոցները, ուսուցչի և աշակերտների գործողությունների հաջորդականությունը:

2.Տես՝ Ջ. Գյուլամիրյան, Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա, Երևան 2006, էջ 307:

Դասի պլանավորման մեջ կարևոր է նաև ուսումնական գործընթացի կազմակերպման ձևը: Այս դեպքում արդյունավետ է երեխաների համագործակցությունը: Ուսուցիչը, կազմակերպելով աշակերտների համատեղ աշխատանք, դրանով իսկ կազմակերպում է նրանց գործնական շփումը: Խմբային աշխատանքի ժամանակ բարձրանում է երեխաների ինտելեկտուալ ակտիվությունը, ավելի լավ է յուրացվում ուսումնական նյութը: Զարգանում է ինքնակարգավորումը, քանի որ երեխաները, վերահսկելով համատեղ աշխատանքի ընթացքը, սկսում են

ավելի լավ գնահատել իրենց հնարավորությունները և գիտելիքների մակարդակը[3]: Աշակերտների համագործակցությունն անհնարին է առանց իրենց տեսակերտների համակարգման, խմբի ներսում գործողությունների բաշխման, ինչի շնորհիվ երեխաների մոտ ձևավորվում են համապատասխան ինտելեկտուալ կառույցներ:

Համագործակցային ուսուցման տարրերի կիրառումը նպաստում է դասարանում համագործակցային միջավայրի ձևավորմանը, օգնում է ուսուցչին՝ հասկանալու դասի էությունն ու պլանավորել այն, պայմաններ է ստեղծում ուսուցման արդյունավետության գնահատման և արժևորման համար: «Խմբային աշխատանքի ամենագնահատելի հատկանիշը խմբի անդամների միջև համագործակցությունն է: Համագործակցության արդյունավետությունը կախված է մեթոդապես ճիշտ տարվող գործունեությունից: Ուսուցիչը պետք է հաշվի նստի աշակերտների ինքնուրույն կարծիքների, կայացրած որոշումների, միմյանց հետ ազատորեն հաղորդակցվելու

իրավունքների հետ»[4]:

Հեշտ չէ դասասենյակում ուսուցման պրոցեսի պլանավորումը: Ուսուցչի համար առաջին հերթին կարևոր է տեսնել, թե ինչպես է աշխատում այս կամ այն ռազմավարությունը պրակտիկայում, այլ կերպ ասած՝ ինչպե՞ս են կիրառվում դրանք դասասենյակում: Այս առումով կարևոր է նաև ուսուցիչների համագործակցությունը:

3.Տե՛ս՝Обухова Л. Ф., Детская (возрастная) психология. Учебник. -- М., Российское педагогическое агентство. 1996, 374 с.

4.Տե՛ս՝ Հովհաննիսյան Գ., Զոհրաբյան Ա., Արնաուդյան Ա., Գրիգորյան Ք.,Դավթյան Մ., Օհանովա Ի., Կառուցողական կրթության հիմունքները և մեթոդները, Երևան, 2004,էջ 178:

Այսպիսով, եզրակացնում ենք, որ դասի պլանավորման կարևոր քայլերից է դասի նպատակի որոշումը: Կարելի է որոշել նաև յուրաքանչյուր դասի խնդիրը, որն էլ իր հերթին կարող է բաժանվել տարբեր դրույթների: Սրանք իրականացվում են ուսուցչի և աշակերտի գործողությունների համակարգում:

Եզրակացություն

Այսպիսով, եզրակացնում ենք, որ հանրակրթական դպրոցի ուսուցչի մասնագիտական գործունեության կարևոր կետերից մեկը դասի պլանավորումն է։Այն նպատակ է հետապնդում ապահովել դասավանդման նպատակաուղղվածությունը և արդյունավետությունը։ Պլանի միջոցով ներկայացվում են տվյալ նյութի բաշխման հաջորդականությունը, մատուցման տևողությունը։

Դասի պլանավորումը թեմատիկ պլանում ներկայացված աշխատանքի նպատակների, խնդիրների, բովանդակության, միջոցների ու ձևերի հստակեցումն է։

Պլանավորումը սահմանում է, թե աշխատանքի ընթացքում ինչի վրա պետք է ուշադրություն դարձնել, տեղավորվել ժամանակի մեջ։

Սկզբում սահմանվում են նպատակները, վերջում՝ ամփոփվում արդյունքները։ Դասի բոլոր փուլերի համար գոյություն ունեն համապատասխան մեթոդներ, որոնց ընտրությունը կախված է առարկայից, դասի թեմայից, դրված նպատակներից։ Դասի ավարտին անհրաժեշտ է վերլուծել աշխատանքը, հասկանալ, թե իրագործվե՞լ են դրված նպատակները, ուսուցման ճի՞շտ մեթոդներ էին ընտրվել։

Դասի կառուցվածքային միավորներն են՝

1. դասի սկզբի կազմակերպում,

2. գիտելիքների, կարողությունների և հմտությունների բացահայտում,

3. աշխատանք ուսումնասիրվող նյութի հետ,

4. նոր նյութին ծանոթացում,

5. գիտելիքների պլանավորված մակարդակի ապահովում,

6. ընդհանրացում,

7. տնային աշխատանքի հանձնարարում։

Օգտագործված գրականության ցանկ

1. Կանեցյան Գ. Ռ., Կապակցված խոսքի զարգացումը առաջին դասարանում, Երևան, 1990։

2. Обухова Л. Ф., Детская психология.Учебник-М.,Российское педагогическое агентство,1996.

3. Հովհաննիսյան Գ., Զոհրաբյան Ա., Արնաուդյան Ա., Գրիգորյան Ք.,Դավթյան Մ., Օհանովա Ի., Կառուցողական կրթության հիմունքները և մեթոդները, Երևան, 2004։

4. Գյուլամիրյան Զ., Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա, Երևան ,2006։

5. Վ. Գյուլազյան,Լ. Առուշանյան,Մ. Գասպարյան, « Ուսուցչի ուղեցույց տետր»։«Օրվա դասի պլան», «Զանգակ»,Երևան,2009։

6. Ս.Խաչատրյան, Կամուրջներ պատերի փոխարեն, Անտարես, Երևան, 2014։